

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ*)

Հոգեհարազատ եղբայր Գէորգ.

Այս օրերս ես սաստիկ հիւանդ գոլով նամակդ չի կարողացայ համալսարանից ստանալ, ուր նա աւել երկար կարող էր մնալ, եթէ Նիկոլեան այնքան բարի չլինէր, որ գնաց և բերեց. կրկին և երիցս կարդացի, նախ և առաջ շնորհակալ եմ մանր տառերու համար առաւել քան թէ մնացեալներու. այնքան ուրախ եմ այդ մասին, որքան դու պիտի ուրախանաս 2 կամ 3 ամսից, երբ որ առաջի անգամ կը կարդաս դոյն այդ տառերով տպած ոտանաւորներ մեր սիրական, բայց ծոյլ Գամառի մէջ. ես շատ բանով չեմ հրճուանում, բայց այս գիւտը, որ մի տարի առաջ մտածելն անգամ ինձ համար խելացնորութիւն պիտի համարէի՝ ինձ միխթարում է բոլոր կրած նեղութիւններու համար, որ տպագրութիւնը ինձ նիւթեց այս 2 տարին: Այժմ մենք ճշ մի բանէ երկիւղ չի պիտի ունենանք. այսուհետև մեր ձեռքն է մեր բարօրութիւնը և խայտառակութիւնը. առաջ մեր վիճակը շատ պայմաններից էր կախած, այժմ միայն երկու ճիշդ և անսխալ ճանապարհ ունինք, մէկը նոցանից կ'տանէ մեզ փառքի, պատուի... և միւսը ամօթի... ևայլն. մէկ խօսքով մեր արիութիւնը և ծուլութիւնը պիտի վճռէ մեր վիճակը: Թշուառութիւնը երկար կռուեցաւ մեր ուխտի հետ. հալածանքը, նեղութիւնը, չքաւորութիւնը, թըշնամեաց ծաղրը ու բամբասանքը անպակաս էին նորանից. մեր ուխտը ազնուութեան վրայ հիմնած գոլով՝ մեծանձնութեամբ տարաւ այդ անցաւոր ցաւերը. մենք դուրս եկանք այդ պատերազմից անփնաս, պարզած դրօշակով: Գուցէ թուի քեզ այս խօսքերս անձնասիրութեան պտուղ. ի՞նչ անենք. այս է մեր միակ պարծանքը: Եւ ի՞նչպէս չի հրճուիմ մեր գործի յառաջադիմութեամբ. ընդհանուր սէրը տարածած է մեր չորս կողմը. յարգանք և ակնածութիւն մեր գործին, ergo և ուխտին.

*) Տես «Մուրճ» № 4.

Թշնամիք՝ սև երես մեր առաջ, և մենք պարզերես նոցա առաջ, որոնք մի ժամանակ մեր խօսքը դռօշի չէին տալի:

Լսիր. ես քեզ գրել էի «Հայոց Դիւցազունքի» մասին, բայց խիստ հարեանցի. Լիւնզ գիրք պիտի լինի, Լիւնզ է դորա գլխաւոր նպատակը, Լիւնզ օգուտ պիտի բերէ մեզ—բոլորը բոլորը ես չէի յայտնել քեզ: Այս գիրքը, ես միտք ունիմ, մի այնպիսի handbuch դարձնել, որ ամեն Հայ կարեւոր համարէ ունենալու իր տան համար ամենօրուայ կարգալու, ինչպէս որ ռուսի համար Կոնիովի առակներն են. աւելորդ է ասել, որ այդ խիստ հնարաւոր բան է, եթէ մենք կարողանանք մի քանի հարկաւոր պայմաններ կատարել. մէկ որ մենք այդ գիրքը պիտի տպենք անակնկալ արգելադրով, որ կարողանանք անակնկալ արժան ծախել. մի ծիծաղիլ—30 կոպէկով: Գուցէ դու ասես թէ 30 կոպէկն էլ շատ Հայի համար բան նշանակում է, ի հարկէ, եթէ նա այդ փողը դէնը ձգելու լինէր. բայց եթէ նա տալիս է այդ փողը և ձեռք բերում է այնպիսի բան, որ կարժէ 2 մանէթ, այդ ժամանակ 30 կոպէկը նա ուրախութեամբ կ'տայ և մեր գիրքը կ'առնու և միտքումը մեզ յիմար կ'կարծէ: Գուցէ դու էլի կ'զարմանաս կամ կ'կասկածիս, որ 2 մանէթ կարող է արժենալ «Հայոց Դիւցազունքը»: Հնա, կարծենայ. մէկ որ նա բաղկացած կ'լինի խիստ սակաւից 8—10 թերթէ, գուցէ աւելի ևս. թուղթը պիտի լինի ամենապատուականը, և փայտափոր պատկերներով, որից ամեն մինը 12 մանէթ կարժէ և այդպիսի պատկերներ 7—8 հատ պիտի լինին, առանձին դորա համար շինած թղթի վրայ տպած: Բոլոր գիրքը (աղաչում եմ չի վախենաս) մեզ կ'նստի 450 կամ 500 մանէթ և 3000 օրինակ. ինչո՞ւ դարմացար և վախեցար. Նազարեանցի գիրքը խեղճ Հայերուն 1400 մանէթ նստաւ. միթէ, բու կարծիքով մեր «Հայոց Դիւցազունքը» նորանից ցած է և պակաս օգուտ կ'բերէ, լուսաւորութեան չեմ ասում, այլ Հայոց գրականութեան: Հայոց Աղջիկ կամ Հարսանիք Արամայ, որ մեկնիչ արձակ շարադրութիւն կ'ունենայ հետը, ուր պիտի բացայայտուի բալլադաի նշանակութիւնը. Զարմայր—նորա մեկնիչ արձակ շար. տրոյացւոց պատմութիւնն է, որ շարադրել է հայրս ընտիր աշխարհաբառ լեզուով вЪ легкомЪ разсказѣ. խիստ ընտիր բան է: Լէոնի գերեզմանը, և անկումն Ռուբինեան տէրութեանը նորա մեկնիչն է. խիստ սրտառուչ պատմութիւն է, և անցքը բաւական գրգռիչ. ուրեմն խիստ հարկաւոր ամեն մարդու իմանալու. Վարդան Մամիկոնեանի մահը և նորա մեկնիչ արձակը է 5 դարու հայոց վիճակը. բաւականին մեծ, սիրուն և հետաքրքիր բան է. վերջապէս Քերոբի Սմբատը, որ կարգաւորայիս, 1905.

ցիր: Բոլոր գիրքը քեզ է ընծայեած և Վարդանը մանաւանդ: Կարելի էր, գուցէ ինչպէս դու կ'ցանկանայիր, որ բանը աւել արժան և տնտեսական բռնել. բայց մի մոռանալ որ տնտեսութիւնը միայն 70—90 մանէթի է և այն թղթի, աւել ոչինչ. կարելի էր ուրիշ կերպով բռնել բանը—50 կ., 70 կ., կամ 1 մանէթով ծախել գիրքը. այդ ժամանակ մենք կը հեռանայինք մեր նպատակից. միտք արաւ:—Մոսկովումը շատ մարդիկ կան, որոնք մեզ շատ կ'սիրէին, եթէ կարողանայինք նոցա մեզ վրայ մոռծել տալ. բայց, աւանդ, մինչև այսօր մենք սպասում ենք հրաջքներու, այսինքն՝ մենք անգործ պառկած՝ մեծ յուսով ենք, որ տապակած ճուտները մեր բերան գլորուեն И КЪ ТОМУ ЖЕ տապակած. և եթէ մեզ ստիպող, գրգռող չլինին՝ այդ քաղցր յոյսերը մինչ երկրորդ Գալուստը մեզ պիտի օրօրեն: Էլի ես կրկնում եմ առաջուայ խօսքերս. Նազարեանցը ոչ այնքան իւր աւտօրիտետով է բան յառաջացնում, որքան НЕЗЫБАЯ: Շխեանցը, ասում են, պատուական մարդ է, Ղարաբաղցի Գրիգորը նորա մօտ ծանօթն է. ես այդ մասին արդէն լաւ պատրաստել եմ վերջինին. աւարտելը քեզ շատ աշխատանք չարժէ. իմացիր միայն յաջողակ ըսպէն որսալ. մի քամահիլ (ինչպէս որ ես առաջ էի անում) կոպիտ Հայերու ընկերութեամբ. նոքա գծուծ են, քանի որ տաքացած չէ նոցա երեակայութիւնը. յետոյ բանը լաւ կ'երթայ: Մամուլի համար ես քեզ շատ անգամ գրել էի. Ղարաբաղցի Գրիգորը ևս շատ յոյսեր ինձ տուեց նորա մասին. կարծեմ որ եթէ նորանից խորհուրդ հարցնուս՝ նա բանը լաւ առաջ կ'տանէ. մի բաց թողնիլ նորան ձեռքիցդ: Ղզլարի արտօնութեան համար խօսեցայ մի մարդու հետ, նա ասաց որ այդ կարելի է Յաշտարխանի կերպով. բայց մեծ գումար պէտք է տալ տէրութեանը. բայց աւելացուց, ես կ'խօսեմ մի ծանօթ օրէնսգէտի հետ և շուտով կտրական պատասխանը կ'տամ: Ով որ յանձն կ'առնու այդ գործը՝ վաճառականական պայման պիտի կապէ մի հարուստ մարդու հետ, որ եթէ բանը յաջողութեամբ աւարտէ՝ օրէնքով իրաւունք ունենայ իր վարձը ստանալու, իբր թէ նորա հետ առուտուրի գործ ունեցած լինի և ոչ թէ վաշխ կամ քրթամ է պահանջում: Պօլդէքօքի թարգմանութեան համար այս իմացայ, որ ոչ մի օրագրի հրատարակիչ չի յօժարիլ իւր օրագրի մէջ մտցնել այդպիսի հեղինակի թարգմանութիւն. խօսեցայ գրավաճառի հետ. նա ինձ կտրական պատասխան չի տուեց ПОТРУДИТЕСЬ ПРИНЕСТИ ասաց, տեսնենք արժէ՞ գնելը և տպելը. ուրեմն ուղարկէ ինձ. երբ որ ձեռիս ունիմ՝ բանը աւել հեշտ կ'աւարտուի. միայն պիտի իմանաս որ 5 մանէթ տպած թերթին տա-

լի, են այդպիսի թարգմանութեան համար և այդ եթէ ապաւորած է: Լսիր թարգմանչից նորա պայմանները և կտրական խօսքը: Դու խորհուրդ ես հարցնում այն աշակերտներու համար, որոնք պիտի կրթութիւն ազգասէր Ֆիդանեանի ծախսով. չի բարկանաւ վրաս, թէ քեզ իմ կարծիքը ասեմ. այսօրուայ օրս Լազարեան վարժատնումը մօտ 70 հայ տղայ կրթութիւն են ստանում, մօտ 50 հայ տղայ զանազան համալսարաններումը ուսանողներ են. մօտ 100 տղայ զանազան կոոպուսներումը և գիմնազիաններումը ևայլն թագաւորական կամ իրանց հաշուով սովորում են. ամեն հայաբնակ քաղաք ունի մասնաւոր և տէրութեան դպրոցներ. մօտ 40—50 հայ մարդիկ մասնաւոր կերպով վարժապետութիւն են անում զանազան հայաբնակ քաղաքներումը և ինչ. այսքան ժամանակ ազգային հայոց լուսաւորութիւնը մի քայլ չի յառաջացել, օրէ օր մենք մոռանում ենք, մեր հայութեան պայմանները, աստ խնդրեմ, ինչից է այս. միթէ պր. Ֆիդանովի առաքինի գոհը պիտի օգնէ ազգի թշուառութեանը: Բայց ուրիշ ռէզուլտատ կ'ստանար այսքան գոհերու պտուղները, եթէ 3 տղայ գուրկ լինէին այդ սուտ ուսումէն և ազգը ունենար այդ ծախսով մի անկախ կանոնաւոր տպարան. այն ժամանակ հայ տղաք կարօտ չէին լինիլ ուսման համար վազել մեծ փողեր միսեկով օտար աշխարհեր, այլ ուսումը ինքը կ'գար և կ'հանդիսանար նոցա առաջ: Եթէ դու բանը լաւ ես հասկանում, և իմ խորհուրդը սխալական չես համարում և եթէ ճշմարտութիւնը առանց գաղելու գիտես ասել մարդու՝ կրկնէ իմ ասածը. կամ ընդարձակէ այս միտքը: Универсалъ ուսում առ ժամանակս ծիծաղական բան է հայոց համար. խիստ բաւական է եթէ առաջի նուազ բոլոր հայերը իմանային հայերէն լեզուով խօսել, գրել, իմանային ազգային պատմութիւնը և թեթեւ գաղափար զանազան գիտութեանց և արուեստից: Այսչափ գիտութեան համար չարժէր այն 10,000-ները, որոնք քամվում են մեր ազգից во имя ложного образования: Միտք արա, այս խօսքերը ասում է քեզ այն մարդը, որ գլուխը դրել է ազգի համար. եթէ մինչև այսօր նա ոչինչ չի արել, բայց միշտ ցանկացել է մի բան անելու. և կանէր, եթէ բաց 'ի բարի կամքից ունենար միշտ, հնարք. միտք արա, այն յաջողութիւնը մեծ սնունդ չէ մարդու համար, աշխարհումս յուսահատութիւն ևս կայ: Ո՛չ ոք այնքան շուտով մարդատեաց չի դառնալ, որքան եռանդոտ մարդասէրը. ունայն ազգասիրութիւնը կ'դառնայ նաստիկ անձնասիրութիւն: Աստուած տայ,

որ մեր ուխտը միշտ անքակ մնայ, մեր սէրը անշէջ՝ Աստուած տայ. այդ իմ միակ ցանկութիւնն է. բայց...

Խոնարհ՝ Ռափայէլ

էլի մի անզգուշութիւն արի. 108 մանէթի պատկերներ ապսպրեցի «Հայոց Դիւցադունքի» համար:

Եղբայր Գէորգ.

Խօսք չունիմ յայտնել քեզ հոգւոյս հրճուանքը, երբ որ ստացայ ք'ուղարկած մանր տառերը, որոնք երկար ժամանակ քունը հեռացրել էին աչքերիցս: Փանդոյեանի բերած նամակը գրելու ժամանակ դեռ ևս չէի ստացել նոցա. բայց հազիւ թէ փոքր ինչ առողջ զգացի ինքս ինձի իսկոյն վազեցի համալսարան, առի ՈՅԵՏԿԱ-ն ու լեզուս կախ արած հոգնութիւնիցս շտապեցի նամակատուն. փափոք Աստուծոյ, վերջապէս հասայ իմ Ծ տարուայ ցանկացածին, որ ոչ մի բոպէ չէր դուրս գալի մըտքիցս. իմ ուրախութիւնը ոչ չափ ունի, ոչ սահման. գլխաւորը արած է. բայց մի քանի պակասութիւններ ևս կայ, որ դու աշխատէ շուտով լցնել. 1) նօտր տառերը մոռացար ուղարկելու. 2) ծոցատառերը, այսինքն՝ նոքա, որոնք մտնում են պոչատառի մէջ, զորօրինակ ը պոչատառ է, բայց նորա մէջի ըխն ծոցատառ է որ ըի ծոցն է մտել. ահա ծոցատառերու թիւը Բ, Գ, Ը, Թ, Ի, Լ, Խ, Դ, Ե, Ղ, Ե, Ղ, Ե, Գ, Յ. 3) կրկնատառեր, այսինքն՝ նոքա, որոնք միմիանց հետ 2—2 կպած են. մե, մէ, մի, միս, մկ, մն, մն. 4) կրճաբառ՝ այս. զօր. նւն. ը, ըս 5) պատուատառերից մի քանիսը են, ի, է, ը, ս, պ, յ, ծ, մ. 6) շեշտատառ և նշանադառ ան, ե, է, ը, ի, ո, օ, ա, ե, է, ը, լ, լ, ո, ծ. ան, ե, է, ը, լ, լ, ո, ծ:

Սյս պահանջածներս ոչ թէ հարկաւոր են, այլ և կարևոր են: Այժմ ես այսքանը շինել կ'տամ, մնացածները դու աշխատէ շուտով հասցնել: Հիմի բանը այսպէս է. իմ կարծիքը քեզ Ha черн ուղում եմ յայտնել: Միտդ է որ ես քեզ ասացի՝ մենք պիտի ունենանք սեպհական տպարան, որ ազատուինք 1000-աւոր դժուարութիւններից և մեծամեծ ծախսից. դու այն ժամանակ խիստ յօժար էիր հետս. և մենք չգիտեմ ձրտեղից, արդէն գըտանք տպարանի փողը, և ունեցանք տպարան մեր մտքումը միայն. գիրքերս արժան տպվում էր և մենք բաւական էինք մեր վիճակէն: Բայց մինչև այսօր մեր ձեռը չ'ընկաւ կանոնաւոր

տպարան. ի հարկէ՝ մամուլի կորուստը մեր գլխաւոր արգելքն էր. բայց մենք մամուլի կորուստը ընդունեցինք թէ և մեծանշանութեամբ, բայց այդ մեծանշանութիւնը մի ասիլ որ անզգայութիւն էր, և ոչ լի գիտակցութեամբ. ապա թէ ոչ մենք իսկոյն պիտի աշխատէինք այդ կորուստը վարձատրել և ամեն հնարը ի գործ դնելով՝ նորից ձեռք բերել մի նոր մամուլ, խօսք չունիմ ամեն նամակի մէջ կրկնվում է մամուլի անունը. բայց... միայն կրկնվում է. դու սպասում ես, որ ես քեզ հասցնեմ նորա կարկտելու վարձը. ես սպասում եմ որ Աստուած վերից կուղարկէ քեզ մի քանի հարիւր մանէթ идѣло пойдетъ на ладъ. մինչ այս մինչ այն մեր թերթերը ծանր գնով տպվում են օտարի տպարանում. և օգուտը պիտի գլորուի օտարի գրպանը, մենք պիտի մնանք միայն դատարկ յոյսերով. մեր յոյսերը այսպէս են. Աստծով կ'ծախուի այբբենարանը, տաղարանը, Աստծով Գամառի ստորագրութիւնը կ'առաջանայ, 1000-ները, որ ձեռք կ'առնեն нѣсколько рублей на листъ дороже ուրիշի տպարանումը մեզ ոչինչ չի նշանակիլ. այս տաղարանը, որ պիտի աժէր մեզ 2—50 մանէթ, այժմ նստում է 438 մանէթ. ի հարկէ 188 մանէթը մեզ համար խիստ հեշտ է հաւաքել. по щучьему повелѣнію, по моему приказанію. աւանդ, այդ մտացածին յոյսերը չեն կատարվում, և եթէ կատարվելու և լինին՝ մեծ ժամանակ կ'ուզեն ի հարկէ, դու ինձ կը հարցնես՝ ի՞նչ անեմ, ի՞նչպէս օգնեմ, ունիմ կարողութիւն, որ մեր կարիքը կարողանամ լցնելու. Դու լիակատար իրաւունք կ'ունենայիր ինձ ամենավատ մարդ կարծել աշխարհումս, եթէ ես պահանջէի քեզանից ըստ զօրութիւնիցդ վեր բան. և այդ երբեք չեմ արել. ի հարկէ ժամանակ առ ժամանակ յայտնել եմ մեր պակասութիւնը, որ դու գուցէ պահանջումնք ես կարծել: Բայց ոչ. առաջարկութիւնս լոկ առաջարկութիւն է եղել, աւել ոչինչ, Բայց մի բան նկատելի է. Աստուած մեր վրան մեծ գութ ունի. նորա ողորմած ձեռքը հովանաւոր է մեզի, մանաւանդ մեր գործին. խօսք չի կայ՝ մենք շատ անգամ դժուար պարագաներու մէջ ենք եղել, բայց վերջապէս բաղդը ժպտացել է մեզի. միթէ քիչ բան ես համարում թրիֆանովի, Սանասարեանի, Իզմիրեանի ևն բարեկամութիւնները, որոնք ուղղակի մեր գործի վրայ մեծ օգնութիւն ունեցել են. թէ չէ՝ ի՞նչով պիտի մեկնուի մեր երեքիս չքաւորութիւնը, և գործերուս յառաջագիւծութիւնը, որի համար գլխաւորապէս պէտք էր մեծ փող կամ մեծ անուն. ոչ այս և ոչ այն ունենալով՝ մենք մինչև այժմ ունեցանք դարձուած մօտ 1,500 մանէթի (տպարան, այբբենարան, 8 թերթ տաղարան և 5 տետր Գամառ). այս խիստ հետաքրքիր խնդիր է. ես մեկնում եմ

այնպէս, որ Աստուած ակներև մեզ օգնում է. դու ասա՛ որ
 сцѣпленіе благопріятныхъ обстоятельствъ, ես չեմ ներհակիլ
 քեզ, բայց միշտ կ'մնամ իմ վերջին կարծիքովս: Ergo,—մենք
 այսուհետև եւ չի պիտի քնենք. մեզ պէտք է. 1) մամուլ. 2)
 տպարան (տպելու տեղ). 3) обезпеченіе 6 аманулау. Գնացածի
 համար Աստուած ողորմած է: Дѣло въ томъ, որ կասես դու,
 այդ անակընկալ գումարը չունինք. ես էլ իմ կողմանէ կ'ա-
 նեմ, дѣло въ томъ, որ մենք կարող ենք ունենալ եւ անպատ-
 ճառ պիտի ունենանք, եւ անպատճառ կ'ունենաք: Լսէ. մեզ
 պէտք է 400 մանէթ մամուլի համար. 100 մանէթ 6 ամսուայ
 բնակարանի կամ տպարանի. այլեւ 150 մանէթ ամեն դիպուա-
 ծի. աւել ոչինչ. եթէ հին մամուլը հնար կայ կարկտելու՝ 2 մա-
 մուլը մեզ խիստ պէտք են, թէ չէ՝ մէկով էլ կ'շատանանք: Դու
 ասում ես որ պր. Ֆիդանեանը վառվռուն մարդ է, խիստ լաւ.
 նորա կրակը մի կողմը. մեզ պէտք չէ նորա արուեստական
 ազգասիրական ուղղութիւնը. թող նա հաշուատես մարդ լինի
 միայն այն գովելի առաքինութեամբ, որ կարեկից լինի բարի
 գործին. մեզ աւել բան պէտք չէ. դու ասում ես, որ նա պատ-
 րաստ է մի քանի հայ տղի լաւութիւն անէ. մենք նորան ցոյց
 կ'տանք միջոց 1,300 մարդու բաւականութիւն անել. եթէ նա
 մեզ կ'տայ այդ 650 մանէթը՝ մենք նորա ձեռագրով կ'խոստա-
 նանք կարճ միջոցումը տալ 1,300 հատ նոր տպելու ալբրենա-
 րանները, որ նա կարող է կամ ծախել, կամ ընծայել. կ'նշա-
 նակէ, որ նա քանի անգամ աւել լաւութիւն արած պիտի լի-
 նի. էլ էն չեմ ասում որ այն խեղճ հայ մանկունք, որոնց վրայ
 պիտի թափուի դորա ողորմութեան գումարը՝ աւել արժանի
 են կարեկցութեան, աւել պտղաբեր պիտի լինին իւր ուսմամբ,
 աւել երախտագէտ պիտի լինին իւր բարերարին, աւել վստահելու
 են, քան թէ մեր ընդհանուր ձեռնարկութիւնը, քան թէ մենք, քան
 թէ մեր պտուղները: Եթէ դու վստահիս (այսինքն այնքան բարձր
 լինիս նախապաշարմունքէն, որ պարզերես կարողանաս) կամ ցոյց
 տալու նորան այս նամակը կամ աւելի ընդարձակ եւ ճոխ պատ-
 մես նորան ասածներս, 'իհարկէ այն ժամանակ ես կ'իմանամ որ
 մեզ հրաշք պէտք չէ. որ մեր ձեռը երկնքից փող ընկնի, այլ խելք,
 այլ բարեացակամութիւն, այլ առողջ մտածողութիւն: Մենք չենք
 ուզում որ մարդիկ մեզ փող ընծայեն. մենք մուրացիկ չենք.
 մեզ թող տան միջոց թւերս տարածելու. թող պահանջեն մե-
 զանից մեր գործի պտուղը, եթէ ճանաչում են որ այն օգտա-
 ւէտ է. ես կարծեմ որ եթէ 8 ամսից նորից եւ աւել ընտի-
 րը տպենք ալբրենարանէն, զանազան տառերով աւելի լիակա-
 տար, այն ժամանակ նա մեծ յառաջադիմութիւն կ'ունենայ,

Թէ՛կ այս ևս Աստուծով պիտի ծախուի շուտով: Ուրեմն՝ յայտնէ Ֆիդանեանին մեր կարիքը և խոստացիր ասած վարձըս: Բայց եթէ նա օգուտ ևս ուզում է՝ այդ ևս կարող ես հատուցանել տալով 15 процентъ հաքիւրին գրքով:—Եթէ այս առաջարկութիւնս կարողացար հասկանալու, հասկացնելու և... էացնելու՝ իհարկէ այդ ժամանակ մեր գործը պիտի արագաբայլ առաջ երթայ: Ես խօսել եմ տպարանի համար Բուդաղեանի հետ. նա ասաց, որ նորա անունով կարող ենք տպարան բանալ. որ նա կօգնէ մեզ իւր միջնորդութեամբ կամ ուրիշ դիպուածներին: Ես չուզացի նորան մեզ աղքատ ձևացնել որ մի կերպով նորա շիքից դուրս հանել տպարանի կարգաւորութիւնը. բայց այդ ժամանակ նա չէր ունենալ այն յոյսը և յարգանքը, որ այժմ ունի, իր բոլոր քրտով: Իհնց այն իմաստով, որ Թշուառին ոչ ոք չի սիրել. ուրեմն ես պիտի անմեղ ստէի նորա առաջ, հաւատացնելով որ ամեն բան պատրաստ է, և թէ մենք ունինք բաւականին գումար լոկ տպարանական ծախսի համար. ես քեզ արդէն ասել եմ որ Գամառի համար այստեղ հաւաքուած է 400 մանէթ. ափսոս է այդ գումարը և այն, որ այսուհետեւ պիտի հաւաքուի, երթայ ուրիշ տպարաններումը. աղիւստէ այնպէս անել, որ տպարանի ծախսը դուրս գայ անակընկալ աղբիւրից, որ մենք կարիք չունենանք դէսից կտրել դէնը դնել, և դէնից կտրել դէսը դնել. թէ չէ՝ այդ կերպով մի տեղ որ ծուռի բանը՝ ամեն բանն էլ կ'իսանգարուի: Ամեն բանի լիակատար գումարը պիտի առանձին լինի. մինի արդիւնքը միւսի պակասորդը չի պիտի լցնէ. գոնէ մի քանի ամիս: Միտք արա, որ միայն նորերումս ազատուեցայ այբբենարանի պարտքից. բայց տաղարանի համար շատ պարտք կայ: Կարծեմ, դու ունիս փոքրը ինչ ստորագրուողներ տաղարանի համար. և այսուհետեւ որքան կարող ես շատացնել նոցա թիւը, պատճառ որ նա շուտով կ'աւարտուի: Գրիգորին տո՛ւր Գամառի և տաղարանի ստորագրութիւնը. նա, կարծեմ որ, կարող է իր շուրջումը փոքր ինչ յառաջագիմութիւն ունենալ. միտքը ձգէ նորան ինձ խոստացած յոյսերը վարդանի տպի համար:

Սրապիոնի աներձագը (Иванъ Наумичъ Саргатовъ) գալու է Մոսկով և այնտեղից գնալու է Новороссійскъ. նա իմ լաւ ծանօթն է և ինքը ևս մի քանի բառեր գրել է Գամառի համար. Կարպուշկա, Նախչևան քաղաք Դօն գետին քովը ւնւ. դա խոստացաւ ինձ 15 օրինակ Գամառն-երից տարածելու համար առնել հետը իւր գնալու տեղը. դու տո՛ւր նորան այդ թիւը և իմացի՛ր հասցէն, որ այնուհետեւ ևս հետը գործ ունենանք: Աստի, խնդրեմ, քանի անգամ ստացար ծրարած այբբենարանները.

ես քեզ ուղարկել էի 4 կապոց. եթէ դոցանից մինը չի ստացել՝ կ'ընշանակէ 350 հատը կորել է. միամիտ արն ինձ:

Միրելի եղբայր Քանանեան,

Ձորս օր դորանից առաջ ես քեզ ուղարկեցի 50 հատ տաղարան. այժմ ես ուղարկում եմ. տեսնում ես որ իմ խոստմունքները կատարվում են, թէև ուշ. բայց դորա պատճառը փողի կարօտութիւնն է, որ զգում եմ այժմ առաւել, քան թէ երբևէ իցէ. այդ 50 հատը որ ստացար, խնդրեմ հէնց Մոսկովումը ծախէ շուտով, եթէ ինչի համար և իցէ հաւաքած փող կայ ձեռքումդ կամ կանխիկ ստացած կամ ծախելով՝ ուղարկէ շուտով. ինձ շատ նեղում է փողի պակասութիւնը. և այն, որ կ'ստանաս՝ նմանապէս այդտեղ ցրուէ ամեն հնարով և միջոցով: Ես փորձով տեսայ որ մամուլ չ'ունենալը մեզ իսպառ պիտի քամէ, ուրեմն առի մամուլ բանացրած, բայց գեղեցիկ 180 մանէթով, որի նորը կարժէ 500 մանէթ. Բուդաղեանի աշունով պիտի տպարան բացուի. հիմի ես արի այնքան, որքան իմ զօրութիւնս հասաւ, 1,500 տաղարան տպեցի. եթէ մանէթով ծախենք՝ պիտի միանգամայն ապահովուի մեր գործատունը հէնց մեր զօրութիւնով. ես Մանասարեանցից առի պարտք 290 մանէթ և միսեցի տաղարանի վրայ, և բացի դորանից տպարանապետին պարտք եմ 180 մանէթ: Մի շաբաթից կ'ուղարկեմ Յաթտարիան, Թիֆլիզ, Ղրիմ և ուրիշ տեղեր տաղարանը. գուցէ շուտով մի օգնութիւն հասնի, թէ չէ՝ բուստորագրութիւնը խիստ անյուսալի է, և մինչև այժմ նիւթապէս ինձ չօգնեց. իմ օրուան պէտք ես համարում рѣшительныя мѣры? դու վախենում ես բանի ծուռ գնալից. բայց այսքան ժամանակ ես յոյս տուածիցս աւել կատարում եմ. միթէ յուսալի մարդ չեմ ես: Ահա ուղարկում եմ քեզ երկու նամակ՝ Փարիզից, մինը Դիւլօրիէից, միւսը Այվազովսքիից: Եթէ կարող ես ջանան երկուսին ևս օգնելու: Մանր տաւերը գրեթէ պատրաստ են: Մի ծուլանար: Փող, փող, փող: Քու ուղարկած ուսմանը տպած է. առաջ Սմիռլինը տուեց 150 մանէթ, բայց իմանալով որ արդէն տպած է նա, այժմ գոռ չի տալի. ձվ է մեղաւորը: Թէ չի հաւատան իմ արած չափին, կարող են գրով հարցնել Սմիռլինից, որ կենում է на Невскомъ, у Полицейскаго Моста, Смирдинъ-сынъ.—ես էլի մի քանի փորձ կ'փորձեմ անփորձ գրավաճառներու հետ. բայց չի կարծեմ որ յաջողութիւն ունենամ, թէ կարողանամ ծախելու ոչ թէ 150-ի, 25-ով էլ կ'տամ:

որովհետև անպիտան է այսուհետև թիմուրեանի նամակը ստացայ. խոստմունքները մխիթարիչ են. բայց աւել լաւ կ'լինէին, որ ^{1/4} նոցանից այս ըռպէիս ձեռումս լինէին. պատճառ որ պարտատէրներէրիցս չ'զիտեմ ձր տեղ փախչեմ: Ինչ և իցէ՝ պէտք է որքան կարելի է շուտով 800 հատ տաղարան ուղարկել թիֆլիզ:

Այս նամակը մօտս ֆնաց 7 օր և չի կարողացայ ուղարկել, Աստուած հաւատան, փող չունենալով. այժմ գտայ 10 կոպէկ, Խնդրեմ ինձ հասցուր փող, Աստուածդ սիրես. 100, 75, 50. որքան կարող ես շուտով: Սաստիկ տանջւում եմ. անհամբերութեամբ սպասում եմ:

Ռափայէլ

22 փետրուարի,

1857. Ս Պետերբուրգ

Սիրելի եղբայր Գէորգ.

Այս նամակիս հետ կ'ստանաս մի ուրիշ ծրարած նամակ, որ որքան կարելի է շուտով կ'հասցնես ում որ պէտք է. այս կերպով անպատճառ հասցնես: Ես այս մարդու հասցէն չ'գիտեմ, բայց դու կարող ես իմանալ Алексѣй Зиновьевичъ Зиновьевъ-ից, որ Լազարեանց վարժատան ռուսաց լեզուի վարժապետն է. կամ Катковъ-ից, որ լոյս ընծայում է Рус. Вѣст. օրագիրը, կենում է Հայոց փողոցումը, Լազարեան տպարանի դէմ ու դէմ: Ես քեզ պատմեմ թէ ի՞նչ նշանակութիւն ունի այս նամակը: Ամիս ու կէս առաջ ես ծանօթացայ մի պատուական ռուս կնկայ հետ, որի մօտ հաւաքւում են ընտիր մարդիկ. դորա անունը Марья Григорьевна Степанова է: Դորա ծանօթներից մէկը ռուս գինուորական, անունը Владимиръ Михайловичъ Каченовскій (որի հայրը մի ժամանակ տեղւոյդ համալսարանումը ректоръ էր) մեծ կարօտութեան մէջ գոլով՝ յայտնում է իմ ծանօթ կնոջը, որ ինքը և իւր փեսան Григорій Ивановичъ Козинеръ-ը (բժիշկ) պատրաստ են մեծ տոկոս տալ, եթէ նոցա իմ և իցէ կ'օգնէ փողով և խոստանում են ձեռագիր կամ վէճքիլ ևս տալ: Մարիա Գրիգորիեւնան ինձ ասում է այս և խնդրում է՝ չեմ կարող արդեօք այդ խեղճերուն օգնել իմ հայ ծանօթներիս միջոցով: Ես հաստատ խօսք չեմ տալի. բայց գնացի Մամիկոնովին մօտ և յայտնեցի դոցա պայմանները: Նա ինձ ասաց որ, այդ գումարը (120 մանէթ) կ'հաւատայ առանց տոկոսի ինձ և ոչ այն անծանօթներուն և կ'խնդրէ ինձանից ոչ

ձեռագիր, այլ գրաւ: Եւ այնպիսի թանկագին բան չ'ունենալով՝ ուղարկեցի 600 տաղարան և 100 այրբենարան. ստացայ 120 մանէթը և տուի ծանօթ կնոջս, որ նմանապէս առանց տոկոսիքի տուեց Козинеръ բժշկին, որի կինը Каченовскій-ի քոյրն է: Այստեղ եւ մի սխալ արի. նոքա ուզում էին վէքսիլ տալ. ես հաւատարմով նոցա ազնուութեան չառի, մանաւանդ որ՝ նոքա խօսք տուին ինձ մի շարաթից յետ դարձնել այդ գումարը, որ մինչև այժմ չեմ ստանում, և ամօթով և ֆեստով ֆնում եմ իմ միամտութեանս համար: Իմ ծանօթ կինը մի նամակ ուղարկեց Զինովիեվի վրայ և նորա մէջ Козинеръ-ին նամակ, որով միտն էր ձգում նորա խոստմունքը՝ բայց պատասխան չեկաւ: Այս երկրորդ նամակն է: Խնդրեմ դու Козинеръ-ի ձեռքը հասցուր և իմացիր նորա պատասխանը. բայց նորա ձեռքը հասցուր: Յայտնէ իմ նեղ դրութիւնը և նորա պարտաւորութիւնը: Շուտ և անպատճառ սպասում եմ պատասխանը:

Քու խոնարհ եղբայր Ռափայէլ

1857 յարտի 26. Մ. Գ. Բ.

Հոգեհարազատ եղբայր Գէորգ.

Քու այսքան ժամանակ նամակ չի գրելը, որին ես անմի ամբողջ ամիս է որ անհամբերութեամբ սպասում եմ, ինձ յուսահատութեան մէջ է ձգում. աւել բան չեմ կարող ասել. թէ և դու հազարաւոր անհրաժեշտ պատճառներ ունենայիր այդպէս անելու համար, բայց ես նոցանով չեմ մխիթարուիլ: Այդ անորոշ դրութեան մէջ գտլով՝ ուրիշ անբաւականութիւններ եկան գլխուս, որ եթէ լսես 'իհարկէ որ խիստ կ'ափսոսաս քու թշուառ բարեկամին: Սանասարեանը Զատիկից յառաջ Մոսկովումն էր. խալաթով նորան ասել է թէ՝ քեզանից այրբենարաններ չի ստացել, որ ես քեզ 3 ամիս յառաջ քանի քանի նամակներով խնդրել էի նորան հասցնել. նա ինձ խիստ ամօթացուց, ասելով որ ես խօսքիս հաստատ չեմ, և... խաբում եմ: Այս բաւական չէ. Բուդաղեանը ստանում է իր եղբորից նամակ թէ՝ ես Քանանեանից չեմ ստացել այրբենարաններ, որ դու նմանապէս իմ խնդրանօք Յաժտարիան պիտի ուղարկէիր. այս մասին էլ ես ամօթանք ստացայ: Այս ևս բաւական չէ. Բուդաղեանի եղբայրը, որ Մոսկովումն է կենում, և որ այժմ այստեղ է, ասում է իւր եղբորը որ՝ ես քեզանից ստացայ պատուէր 30 հատ տաղարան ծախելու՝ չեմ ստացել ոչ ոքից, այն-

ինչ ես քեզ խնդրել էի տալ նորան 30 հատ տաղարանք. այս մասին ես ես ստացայ ամօթանք: Ասած խնդրեմ, ինչպէս ես այսքան զրպարտութեանց մէջ մտայ. միթէ ես մեղաւոր կամ խաբեբայ էի, որ իմ ընտիր բարեկամները այդպէս են կարծում. միթէ ես ափսոսալի չեմ. միթէ ես այն ամենը իւր ժամանակին անթիւ անհամար նամակներով քեզ չէի ծանուցանել. ահա, Քանանեան, ճրքան ինձ չես յարգում: Բայց պէտք չէ յուսահատուել. դոնէ այժմ ուղղէ արած սխալներդ. 400 հատ այբբենարան իսկոյն տո՛ւր Խալաթովին Սանասարեանի անուամբ, որ նա հասցնէ բժիշկ Յովհաննէսեանի տուն. այլեւ 100 հատ Տէր-Յովսէփեանին: 180 հատ այբբենարան ուղարկէ փոշտով Յաժտարխան Բուդաղովին եւ և 10 օրինակ ամեն Գամառ-Քաթիպաներից: Եւ յետոյ զրէ նամակ Սանասարեանին և որքան կարող ես արդարացու՛ր ինձ, որ նա չի կարծէ ինձ խաբեբայ և ստախօս: Աստուած հաւատա՛ ես խիստ սաստիկ տանջվում եմ քո լուրթեամբ և անգործունէութեամբ:

Ստացար 4 Թուահամարը Գամառ-Քաթիպաներուն, որ 3 շաբաթ դորանից յառաջ ուղարկել էի. թիւ արիր նոցա, և ինչո՛ւ ինձ իմաց չես անում: Ես քեզ գրել էի որ տոմսակները պատրաստ են և պէտք է փող տալ և ստանալ. դու լուռ ես, բան չես գրում: Ասած, խնդրեմ, թիւ անեմ ես: Միթէ այդ կերպով կարելի է բան յառաջացնել: Ես քու խնդիրները ճշտութեամբ կատարում եմ. և դու իմը ո՛չ. Գամառ Քաթիպայի 4 Թուահամարը որպէսևիցէ պարտքով տպեցի. 5-երորդի համար կոպէկ փող չունիմ. 3 ամսուայ ռոճիկներս առի և դրի տպարանի վրայ այն յուսով որ շուտով մի կողմից օգնութիւն կը ստանամ. և ահա ինձ ինչ օգնութիւն է հասնում և ամօթանք և զրպարտանք: Փնփռե՛ք Աստուծոյ այս էր վարձը իմ աշխատանացը, որի վրայ թափում եմ արիւն քրտինքս:

Կարծելով որ դու տակաւին չես հասցրել այբբենարաններից ո՛չ մի հատ Թիմուրեանին, ես ուղարկում եմ նորան 114 հատ. թերեւ նա ծախէ և ինձ այս նեղ ժամանակուայ համար մի օգնութիւն հասցնէ. բայց ես նորան երկու նամակ էի ուղարկել մին մինի բամակից և խնդրել էի մի օգնութիւն անել. պատճառ որ ես այժմ ամեն պատրաստութիւնը տեսել եմ շուտով մեր սեպհական տպարանը բացելու. եթէ բանը այս կերպով երթայ յառաջ, ի հարկէ սերմը հողի մէջ կ'ընթանայ առանց բարերար անձրևի: Բուդաղեանը Ղզարի գործի մասին խիստ արի առաջ է ընկնում. պէտք է նորա առաջ հաւատարիմ երևիլ. մանաւանդ ես քեզ նորա աչքին շատ և շատ բարձր եմ դրել. նորա հետ չի կարելի փոխանցել բան բռնել. պէտք է

ճշտութիւն. նա ինձ խիստ օգնում էր և անս ես նորան ինչպէս վարձատրեցի. ամօթ ինձ: Բուդաղեանը ինձ ասաց որ Ղզլարի գործոց մասին մի մարդ է գալու Պետերբուրգ. միթէ այդ ճշմարիտ է. կ'նշանակէ Ֆիդանեանցներու խօսքերը Фокысѣ էին. լաւ չէ: Խնդրեմ մի նամակ գրես նորից Բուդաղեանին (անցեալը ես տուի նորան և նա քեզ կ'գրէ նամակ) և բանը ճշտութեամբ և տեղեակ յայտնես. նմանապէս պարզացրո՛ւր նրա առաջ այբբենարաններու յետաձգութեան մասին, որ նա մեզ շառլատաններ չի կարծէ: Նմանապէս ինձ մի փոքրիկ հաշիւ գրէ՝ արդեօք մինչև այսօր ձեր և որո՞նց վրայ և ձրքան ուղարկել ես մեր բոլոր տպած աշխատութիւնները և քանի՞ հատ ինչ բաներից ֆնացել է քու մօտ: Այժմ տպում եմ Ռօբէնզօնը:

Մնամ քեզ բարեացակամ Ռաիայէլ

1857. ապրիլի 19

Ս.-Պետերբուրգ:

Հոգեհարազատ եղբայր Գէորգ.

Քու Մայիսի սկզբանը գրած նամակը ես ստացայ Կուզա-նովից Յունիսի վերջերուն, և ստանալուս միւս օրը կատարեցի քու խնդիրքը թէ և հիւանդ էի, թէ և կոպէկ ասած բանը գրպանումս չունէի. Աստուած ողորմաց վրաս և ուղարկեց ինձ այն օր մի ДУГИНИСТЪ, որ գրեիս¹/ գինը տալով տուեց ինձ հընար քեզ բաւականացնելու. եթէ ես ուշացայ՝ վերը յիշած պատճառը իմ օգտին է խօսում. եթէ չես հաւատում, ես կ'պահանջեմ Կուզանովից որ նա իրան մեղադրելով ինձ արգարացնէ քու առաջ. եթէ (վերջապէս) կարծում ես թէ ես ամիս յառաջ կատարած չէի լինիլ այն, ինչ որ այժմ կատարեցի. դորա համար էլ այս կասեմ որ քու պահանջմունքը խիստ ըստիպողական էր, թշնամին չէր անիլ այնպէս:

Այժմ ես սկսեցի փոքր ինչ առողջանալ, կարողանում եմ տնից դուրս գալ և փոքր առ փոքր ուղղել մեր գործը, որ միանգամայն խափանուել էր: Լսիր. Դամանները պէտք է այսպէս կարգադրել:

Պետերբուրգ—200 (իմ վրայ)

Թիֆլիս—150 (իմ վրայ)

Երևան—30 (չգիտեմ ձկ կ'օգնէ մեզ)

Գանջա — 50 (Թիմուրեանի միջնորդ)

Շամախի— 50 (չգիտեմ)

Շուշի — 50 (Բուդաղեանը)
 Օսմ. տէրութիւն—50 (իմ վրայ)
 Մոսկով — 30 (եթէ կարող ես)
 Ստաւրապոլ—20 (ես կամ դու)
 Հին Նախիջևան—20 (չգիտեմ)
 Նոր Նախիջևան—15 (իմ վրայ)
 Արիմ—15 (իմ վրայ)
 Աստրախան—25 (Բուդաղեան)
 Ազլար—30 (о если бы !?) դու (?)

Այսքան ժամանակ մենք մի կանոնաւոր բան չենք բռնել-
 բայց որքան հեշտ էր այսպէս գործը հրաշապէս առաջ տանիլ-
 մի մտիկ արա՛ որքան հեշտ է այսպէս կանոնաւորած ցրուելու
 Հիմի ես ուղարկեցի Թիֆլիս 50 հատ ամեն օրինակից բժիշկ
 Յովհաննիսեանի վրայ, եւ և 100 հատ ուղարկելու եմ. բայց
 չունիմ 1 թուահամարից. դու ինձ գրէ քանի հատ կայ մօտդ,
 և անպատճառ նորանից հարիւր հատը ծրարէ և յանձնէ ուս
 որ գիտես, որ նորան հասնի: Նմանապէս նշանակած քաղաքներու-
 մը ուղարկէ (եթէ չես ուղարկած) նշանակած թուով: Եւ ինձ
 իմաց տո՛ւր, որ ես էլ այնպէս շարժիմ: Թողնէ՛ք, ինդրեմ,
 մեր դանդաղութիւնը. ժամանակն է արդէն արիութիւն բանա-
 ցնելու: Ես ստացայ Փարիզից յետագայ կարծիքը մեր վրայ-
 «Ձեր տպած գրքերը շատ հաւանելի թուեցաւ մի քանի գիտ-
 նականաց ուստի և Մասնաց Աղանոյ մէջ շուտ կտեսնէք խորհր-
 դածութիւն Գամառ Քաթիպայի լոյս ընծայողներու ազնիւ ե-
 ռանդի և հայրենասիրութեան վրայ. քանի մի երգ և հատուած-
 ներ դուրս քաշեցին նորա մէջից և պիտի տան նորանով զա-
 դափար Ռուսաստանի Հայ ուսանողաց քանքարի և հանճարի(?)
 մասին: Արաքսի արտասուները բաւական է կարդալ, որ իմա-
 նան թէ քանի անգամ բարձր են բուն հայերը մեր կեղծեալ
 կիսահայ վենետիկցիներէից. այս Դիւլօրիէի կարծիքն է, որ
 Թարգմանեց այն և տպելու է իւր Revue d'Orient-ի (օրագիր)
 մէջ: Մենք ասացինք, որ դուք ունիք տպելու մի աւել գերա-
 զանց բանաստեղծական հատուած՝ Վարդան Մամիկոնեան. նո-
 քա ցանկացան ունենալ ոչ միայն ձեռագիրն, այլ և տպելու
 հրաման և վարձն եւ կը հատուցանեն յօգուտ ձեր ուխտին
 և նորակազմ տպարանին (?) գինը դուք նշանակեցէ՛ք: Ահա,
 եղբայր սիրական, քեզ յայտնեցի մի ազգային կարծիք, որ
 պէտք է մեզ խիստ խրախուսէ, եթէ ունինք մենք վառ սիրտ
 և ազնիւ հոգի: Դիւլօրիէն եւ գրեթէ նոյն խօսքերով խրախու-
 սում է մեզ (նա գիտէ մեր ուխտի պայմաններն և նպատա-
 կը): Քերորի գնալից յետ ես ծանօթացայ Ակադիմիք Բոսսէի

հետո Նա իմացաւ մեր ձեռնարկութեան պայմաններն և մեծ յոյսեր տուեց թէ՛ մի օր մենք անքան օգտաւէտ կ'լինինք մեր ազգին, որ բոլոր Հայոց գիտնականք միացած չեն կարող նոյնը կատարելու։ Բայց որքան զարմացաւ նա, երբ որ լսեց և իմացաւ ինձանից թէ մեր գործը սկսուեցաւ 30 մանէթով և այժմ ունինք ոչ թէ տպած գրքեր, այլ և տպարան։ Նա նախագուշակեց որ դուք (մենք) միայն դուք կ'լինինք պատճառը, որ մի ժամանակ բուն Հայաստանի մէջ կ'ունենանք համալսարան, թատրոն, ճեմարան գիտութեանց։ Ա՛խ, աւելցուց, երանի՛ ձեր ազգին, որ ունի ձեզ պէս (մեզ պէս և ոչ ինձ պէս) կարեկիցք աղքատ պատանիներէ։ Երանի՛ նորան, որ դուք և ոչ տէրութիւնն սկսեց ջանալ նորա բարոյական կրթութեան համար։ Ձեզմով ազգը մի անգամ կ'բարձրանայ en masse և ոչ դանդաղ և մի մի։ Ես ցոյց տուի և կարդացի բոլոր քու նամակները նմանապէս և թիմուրեանի։ Դուք աւել բարձր էք Ձեր ազնիւ և անկեղծ զգացմունքով, ասաց, քան թէ մեր Ակադեմիքները։ Շատ ուրիշ դորա նման բաներ ես ասաց, որոց ամբողջն է մտիս և ոչ բառ առ բառ։ Ի՞նչ կ'ասես։ Միթէ բարի գործը թագչում է։ Ո՛չ։ Արիութեամբ և անկեղծութեամբ մենք ամեն բան կ'յաղթենք։

Նշեալի սիրական, ինձ զարմացնում է թիմուրեանի լռութիւնը. միթէ նա մեզ ուրացաւ։ Աստուած հաւատան որ ես սաստիկ նեղ դրութեան մէջ եմ։ Եւս քառուել այն մասին եմ չարչարվում որ այս վատ հանգամանքը հասաւ ինձ հէնց այն ժամանակ, երբ որ գործը սաստիկ լաւ ուղղութիւն ստացաւ։ Քանանեան միթէ հնար չի կայ ինձ մի փոքրիկ օգնութիւն հասցնելու։ Միթէ տաղարանի անյաջող տպուելը քեզ յուսահատեցուց. միտք արա որ ուրիշները աւել մեծ սխալներ են արել իրանց կեանքումը քան թէ ես. միթէ ես մեզ վատ կամուրով լսեցի մի քանի անհիմն մարդոց կարծիք. միտք արա և այն, որ ես միանգամայն ինքնակամ չի տպեցի, ինչպէս դու ինձ մեղադրում ես, այլ խորհրդով քանի մի անձանց, ինչպէս Իգմիրեանցի, Աւագեանցի, Բերբերի կայնու։ Եթէ վերջապէս դու անյուսացած ես ինձանից, գրի՛ գոնէ մի ուրիշ պատճառը, բացի տաղարանի անյաջող դուրս գալից. ես այս 2 տարուայ մէջ շատ եմ աշխատել, լսում ես, շատ եմ աշխատել. եթէ չի կարողանամ այն ամէնը լոյս ընծայել... գոնէ իմ КИПЫ ձեռագիրները քեզ կ'ապացուցանեն որ այդքան օգտաւէտ գործերով ժամանակ անցնողը բացի ազնիւ զգացմունքից ուրիշ շարժառիթ չափիտի ունենար իւր կեանքումը։ Աստուած ինձ թող չարաչար պատուհասէ եթէ մի ժամ ես մոռացած լինիմ այն օրհասական

երեկոյեան խօսակցութիւնը, որ մենք երեքս ունեցանք Թիմուրեանի սենեակումը. եթէ չեմ կարողացել 1,000 աւագամ աւել անելու քան թէ արել եմ, պատճառը և միակ պատճառը չքաւորութիւնս է եղել Գանանեան, ես ինչ որ ունէի՝ տուի մեր ուխտին. որքան ոյժ կար մէջս թափեցի. որքան խօսք ունէի բերանում, յորդորեցի մարդոց դէպի մեր գործին գործակցութիւն. դուք էլ աբիք, որքան կամեցաք, բայց արեք արդեօք որքան կարողացաք:

1) Այս նամակը, խնդրեմ տուր Սուլթան-շահին: Եւ պատասխանը ստացիր և ուղարկէ ինձ:

2) Յովհաննիսեանը ոչ պատասխան է ուղարկում, և ոչ խնդրած տառերը:

3) Գրէ, որքան տպած գրքերից կայ մօտումդ: Եւ որքան և որտեղ ցրուել ես:

4) Ի՞նչ լուր կայ Թիմուրեանից:

5) Այս ուսանողի (ազատ լսող) ժախն դու խիստ անորոշ ես գրում. գրէ աւել պարզ, որ ես հասկանամ և քեզ պատասխան գրեմ:

6) Հնար տես ինձ մի փոքրիկ օգնութիւն ուղարկելու:

Մնամ միշտ հաւատարիմ եղբայր և բարեկամ

քու Ռափայէլ

Յունիսի 20.

Սիրելի Գէորգ,

Անձ քեզ մի նոր ապացոյց, սիրական Գէորգ, թէ որքան անբաւականութիւն է ծագեցնում երկու սերտ բարեկամաց մէջ երրորդի անպիտանի խառնուելը: Դու ուղիղ ամիս դորանից առաջ գրել ես մի կողկողագին նամակ, որի գլխաւոր պարունակութիւնը այն էր, որ ես շուտով ուղարկեմ Պօլդէքօքի ումանը. այդ նամակը և առհասարակ քեզանից վաղուց նամակ չի ստանալս ինձ մեծ տխրութիւն, յուսահատութիւն էր պատճառում. և ի՞նչ. այդ նամակը ամիս առաջ ստացել է Կուզանովը, առել ու տարել է հետը Царское село և թողել է մօտը մինչև երեկուայ օրը. նամակդ նորա ծոցի բրտինքից գրեթէ անհնարին էր կարդալու. հագիւ հագ կարացի ջոկջկել քու գրութիւնը և շտապում եմ (առաջ) ուղարկել քու պահանջած գիրքը և որքան կարելի է շուտով, այսինքն ինչպէս հրամայում ես, նամակը

ստանալու միւս օրը ուղարկում եմ քու գիրքը: Գնա ու մեղադրէ ինձ: Ա՛խ, հոգիս, ես գիտեմ որ դու ինձ շատ մեղադրում ես այս երկար միջոցումը. բայց դուցէ մի օր ինքդ կ'իմանաս որ ես ամենեւին յանցանք չունիմ: Եթէ կ'հաւատաս ինձ՝ ինձ խիստ թանգ աժեց նաև ուղարկելը. որ ուրիշ միջոցին և ուրիշ դիպուածումը ես չէի անիլ: Մօտս մի կոպէկ փող չունէի. բայց դորա համար պէտք էր գոնէ 75 կոպէկ: Ես ծախեցի Գիգօյի պատմութիւնը, որի հետ խօսք էի տուել ամենեւին չի հեռանալ: Այժմ սպասում եմ քեզանից քու կարծիքը: 'Ի սէր Աստուծոյ մի մեղադրիլ ինձ. ես արժանի չեմ քու բարկութեան: Ես հազիւ կարողանում եմ գրել. խիստ հիւանդ եմ, տենդ ունիմ: Թիմուրեանցից դեռ ես լուր չունիմ: Օգնութիւն ոչ մի կողմից: Խնդրեմ 1 և 2 ձեռները Գամառին իմացնես քանի քանի հատ կան մօտդ և քանի՞ այրբենարան: Փարիզից ուրախալիլ լուր կայ. բայց հիւանդ եմ, գրել չեմ կարող:

Նամակդ ստացայ ամսիս 17, և 18-ին գրում եմ պատասխանը:

Ռափայէլ